Հայտարարություն
2015 թ. հունվարի 31-ին Բերձորում տեղի ունեցած բռնությունների վերաբերյալ

ՀՔԱ Վանաձորի գրասենյակը խստորեն դատապարտում է 2015 թ. հունվարի 31-ին «Հիմնադիր խորհրդարանի» կազմակերպած տեղեկատվական ավտոերթի մասնակիցների, այդ թվում կանանց, երեխաների և լրագրողի նկատմամբ ԼՂՀ Բերձոր համայնքի մոտ ԼՂՀ իրավապահ մարմինների ներկայացուցիչների կողմից իրականացված շուրջկալ օպերացիայի միջոցով իրականացված բռնությունները:
ՀՀ իշխանություններից պահանջում ենք պաշտոնապես և անհապաղ դիմել ԼՂՀ պաշտոնատար մարմիններին՝ ապօրինություններ թույլ տված իրավապահ մարմինների աշխատակիցներին պատասխանատվության ենթարկելու պահանջով:

Վանաձոր,
2 փետրվարի, 2015 թ.

59 Tigran Mets St., Vanadzor, 2001, Republic of Armenia, Tel. (+374 322) 4 22 68; E-mail: hcav@hcav.am
Տիգրան Մեծի 59, Վանաձոր, 2001, Հայաստանի Հանրապետություն, հեռ. (+374 322) 4 22 68; էլ. փոստ՝ hcav@hcav.am